

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԸՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն № 142

«07» հոկտեմբերի 2015թ.

ք. Իջևան

§ 1

Մասնաձյուղի ստորաբաժանումներում որակի ապահովման ներքին գործընթացների մշտադիտարկման աշխատանքային խումբ կազմելու մասին

Կարևորելով ԵՊՀ Իջևանի մասնաձյուղի ստորաբաժանումների աշխատանքներում որակի ապահովման ներքին գործընթացները և այդ կապակցությամբ որակի իրականացման շարունակական ամրապնդման և զարգացման ռազմավարությունը, ինչպես նաև ելնելով ՄԿՈԱ բաժնի և ստորաբաժանումների կենտրոնների լիազոր ներկայացուցիչների միջև աշխատանքային արդյունավետ փոխհարաբերություններ ստեղծելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով մասնաձյուղի կանոնադրության 28-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջներով.

Հ ր ա մ ա յ ու մ եմ

1. ԵՊՀ Իջևանի մասնաձյուղի ստորաբաժանումներում ստեղծել որակի ապահովման ներքին գործընթացներն ապահովող մշտադիտարկման խումբ հետևյալ կարգով.
 - 1.1. խմբի ղեկավար - **Բրուտյան Վաչիկ Արամայիսի**, հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ, մ.գ.թ., դոցենտ,
 - 1.2. խմբի անդամ - **Մակարյան Անուշավան Հայկարամի**, տնօրենի խորհրդական, ֆ.մ.գ.թ., դոցենտ,
 - 1.3. - **Ճաղարյան Մարիետա Ալբերտի**, ՄԿՈԱ բաժնի ավագ մասնագետ, ասիստենտ,
 - 1.4. - **Խաչատրյան Արփինե Մանվելի**, ՄԿՈԱ բաժնի մասնագետ, դասախոս,
 - 1.5. - **Գրիգորյան Նաթելլա Մերոժի**, տնօրենի օգնական, պ.գ.թ., ասիստենտ,
 - 1.6. - **Մարգարյան Ալեքսան Շամիլի**, կիրառական արվեստի ֆակուլտետի ղեկանի ժ/պ, ֆ.մ.գ.թ., ասիստենտ,
 - 1.7. - **Հովհաննիսյան Ալբերտ Սարգսի**, ԱԿ բաժնի վարիչ, իրավախորհրդատու,
 - 1.8. - **Քամայան Հայկ Արթուրի**, բնական գիտությունների ֆակուլտետի ֆ.մ.գ.թ., ասիստենտ,
 - 1.9. - **Ավետիսյան Գայանե Հրաչիկի**, տնտեսագիտության ֆակուլտետի տ.գ.թ., ասիստենտ,

- 1.10. - **Խաչատրյան Սոնա Ժիրայրի**, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ, կ.գ.թ., ասիստենտ,
- 1.11. - **Վանյան Հասմիկ Սամվելի**, հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատու, ք.գ.թ., ասիստենտ,
- 1.12. - **Բեգինյան Լիանա Գրիշայի**, տնտեսագիտության ֆակուլտետի պ.գ.թ., ասիստենտ:
2. Հանձնարարել խմբի ղեկավար Վ.Բրուտյանին՝ մասնաճյուղի իրավախորհրդատուի հետ սեղմ ժամկետում մշակել աշխատանքային խմբի գործառույթների կանոնակարգը և ներկայացնել հաստատման:
3. Հանձնարարել մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ ամենօրյա գործունեության ընթացքում համագործակցել մշտադիտարկման աշխատանքային խմբի անդամների հետ և նրանց օժանդակել սույն հրամանով նախատեսված գործառույթների կատարման ուղղությամբ:
4. Մշտադիտարկման հանձնաժողովը իր աշխատանքները կազմակերպում է յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի և շաբաթ օրերին՝ ժամը 14.30-ին:
5. Հրամանը ծանոթացնել մասնաճյուղի անձնակազմին և ուսանողությանը:

ՏՆՕՐԵՆ՝ Ս.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝ Վ.Ս.ԵԳԱՆՅԱՆ

